ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Արա Բաբլոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-179-13.12.2012-ՍՀ-010/0*) վերաբերյալ:

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետական նպաստների նպատակների շարքում, ի թիվս այլ նպատակների, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի (մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատավարձի) մասնակի հատուցումն է:

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն նպաստառու ընտանիքների (երեխաների) թիվը նախատեսված է 11200, իսկ մեկ երեխայի խնամքի նպաստի չափը՝ ամսական 18,0 հազ. դրամ: Ուստի, 2013 թվականին այս նպատակի համար նախատեսվել է 11200 երեխա x 18000 դրամ x 12 ամիս=2419,2 մլն դրամ (առանց վճարման ծառայության):

Ըստ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած վիճակագրական տվյալների՝ 2010 և 2011 թվականների ընթացքում ծնված երեխաների թիվը կազմել է համապատասխանաբար 44825 և 43340 (2012 թվականի տվյալները դեռ հասանելի չեն): Այսինքն, 2013 թվականի ընթացքում մինչև երկու տարեկան երեխաների թիվը կկազմի 88165:

Այսպիսով, 2013 թվականին մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք կունենա նախատեսվածից 76965-ով ավելի երեխա: 2013 թվականին նպաստի չափը 18.0 հազ. դրամի չափով պահպանելու պարագայում մեկ տարվա համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցները կկազմեն՝ 16,624.4 մլն դրամ [(88165 երեխա x 18000 դրամ x 12 = 19043,6 մլն դրամ) – 2419,2 մլն դրամ=16624,4 մլն դրամ], իսկ 2013 թվականի վեց ամսվա համար լրացուցիչ կպահանջվի (նախագծով այն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից) առնվազն 8312,2 մլն դրամ: Իրականում կպահանջվի ավելին, քանի որ նախագծով նախատեսվող զույգ և ավելի երեխաների ծննդյան դեպքում նպաստը մինչև 2 տարեկան 6 ամսականը վճարելու համար պահանջվող գումարը հաշվարկված չէ՝ համապատասխան ելակետային տվյալների բացակայության պատճառով:

Միաժամանակ, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «իսկ չաշխատող ծնողի համար՝ երեխայի կամ երեխաների ծննդյան օրվանից երկու ամիս առաջ» դրույթն ընդհանրապես անընդունելի է, քանի որ երեխայի խնամքի նպաստը տրվում է երեխայի

խնամքի, այլ ոչ թե հղիության համար և այս տեսակի նպաստի նպատակը, ինչպես նշված է վերևում, քաղաքացու որոշակի ծախսերի (մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատավարձի) մասնակի հատուցումն է:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես ընդառաջ քայլ, պատրաստակամ է նախագծի հեղինակների հետ քննարկել ուսանող մայրերի համար մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք տրամադրելու հնարավորության հարցը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության ոլորտի, մասնավորապես մոր և մանկան առողջության պահպանման բնագավառում վարվող քաղաքականության տեսանկյունից կունենա դրական ազդեցություն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքի նախագծի ընդունման արդյունքում նպաստավոր պայմաններ կստեղծվեն վաղ հասակի երեխայի խնամքի իրականացման համար, իսկ մայրական խնամքը հանդիսանում է երեխայի առողջության, նորմալ աճի և հոգեշարժական զարգացման, հիվանդությունների կանխարգելման կարևորագույն նախապայման:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի հետ կապված նպաստի չափի փոփոխությանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հստակեցվում է երեխայի կամ երեխաների խնամքի նպաստի իրավունքի ծագման հետ կապված հարաբերությունները:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն (ամբողջական, այդ թվում զույգ և ավելի երեխաների ծննդյան դեպքում նպաստ նշանակելու տևողությունը վեց ամիս ավել հաշվելու դեպքում) հնարավոր է տալ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 13 նիստի արձանագրության 2-րդ կետով հավանության արժանացած իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումների 337-րդ կետով սահմանված ձևաչափով տեղեկանքի և անհրաժեշտ հաշվարկ-հիմնավորումների, իսկ կոնկրետ թվային գնահատականի անհնարինության դեպքում՝ նույն ցուցումների 341-րդ կետով սահմանված համապատասխան վերլուծության առկայության պարագայում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-179-13.12.2012-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 25-ի ՀՕ-205 (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին կետի «երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձը՝» բառերը փոխարինել «երեխային կամ երեխաներին խնամող» բառերով:

Հոդված 2. Օրենքը 23-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ:

2. Երեխայի կամ երեխաների խնամքի նպաստի իրավունքը ծագում է աշխատող ծնողի համար նրա՝ մինչեւ երեք տարեկան երեխայի կամ երեխաների խնամքի արձակուրդում գտնվելու մասին համապատասխան գործատուի հրամանն ուժի մեջ մտնելու ամսից, իսկ չաշխատող ծնողի համար՝ երեխայի կամ երեխաների ծննդյան օրվանից երկու ամիս առաջ: Երեխայի խնամքի նպաստի իրավունքը պահպանվում է մինչեւ նրա երկու տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ը, իսկ զույգ եւ ավելի ծնված երեխաներինը, մինչեւ նրանց 2 տարի 6 ամիսը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետից «անկախ գործատուի հրամանում այդ մասին նշված լինելու հանգամանքից» բառերը հանել, իսկ «2 տարեկան» բառերը փոխարինել «2 տարեկան 6 ամսեկան» բառերով:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ կետում «վերջակետը» փոխարինել «ստորակետով» եւ ավելացնել նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ «իսկ զույգ եւ ավելի ծնված երեխաների համար մինչեւ 2 տարի 6 ամսեկանը»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ:

5. «Երեխայի խնամքի նպաստ նշանակելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, տարածքային մարմինն այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է համապատասխան գործատուին, եթե ծնողը գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

Հիմնավորում

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

«2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է «Մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ»-ի ծրագիր: Ծրագիրը կազմված է 6 հազար ընտանիքների հաշվարկով, եւ կազմում է 1մրդ 296մլն դրամ: Հաշվարկների հիմքում դրված է նվազագույն ամսական աշխատավարձի 60%-ը՝ 18 հազար դրամ:

Նշյալ ծրագիրը, մարդու իրավունքների տեսակետից, անհավասար պայմաններ է առաջացնում աշխատող եւ չաշխատող ծնողների ընտանիքների համար:

Այդ անհավասարությունը վերացնելու նպատակով առաջարկում ենք մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ տրամադրել բոլոր երեխաներին՝ անկախ ծնողների աշխատող լինելու հանգամանքից, ավելին զույգ եւ ավելի երեխաների ծննդյան դեպքում առաջարկում ենք նպաստը նշանակել մինչեւ երեխայի 2 տարեկան 6 ամսեկան հասակը, նկատի ունենալով, որ զույգ եւ ավելի ծնված երեխաների խնամքը համեմատաբար ավելի դժվար է:

Առաջարկվող փոփոխություններով երեխայի խնամքի նպաստը կլինի առավել հասցեական եւ նորածին երեխաներին կցուցաբերվի հավասար մոտեցում, անկախ իրենց խնամողների աշխատելու կամ չաշխատելու հանգամանքից: